ԱՆՄԱՀՆԵՐԻ ԿԱՑԱՐԱՆԸ

Խաչվերացի տոնն էր, եւ խաչի վերադարձը վերաիմաստավորվել էր Եռաբլուրում: Հողագույն քարակոփ խոսուն խաչքարի տեսքով այդօր վերադարձան նրանք, ովքեր շատ երկար բացակայել էին մեզանից: Բացակայել էին՝ չթողնելով հասցե եւ տունդարձի ժամը չնշելով:

Հիմա արդեն նրանց հարազատներն իրենց սպասումը խնկարկելու ուխտատեղի ունեն՝ Եռաբլուր – յուրօրինակ պանթեոնում, ուր նահատակ իրենց զինակիցների կողքին հավերժին ի պահ տրվեց նաեւ Նրանց Անհայտությունը:

Հուզումը այդօր սոսկ լալահառաչ արցունքներով չէր օծվում. հպարտություն էլ կար՝ չմեռնող հույսին շաղախված: ՀՀ պաշտպանության նախարարությունը, անհաշտ նաեւ անհայտությանը զոհ գնացած մարտիկների կորստի հետ, նրանց ոգու պես սլացիկ կոթող նվիրեց բոլոր տպատողներին: Եվ ՀՀ ՊՆ դատաիրավական աշխատանքների վարչության պետ, գնդապետ Սուրեն Գեւորգյանը, թաքցնելով հուզմունքը, բացված է հայտարարում մարտական գործողությունների ընթացքում անհայտ կորած զինվորների հիշատակը հավերժացնող կոթողի բացման արարողությունը: Իսկ փոխնախարար, գեներալ-մայոր Միխայիլ Գրիգորյանը դիմում է բոլորին.

-Դառն ու ծանր է եղել անկախ պետականության կերտման ճանապարհը: Այն նվաճվել է Հայաստանի ու Արցախի ռազմաճակատներում տարած փայլուն հաղթանակներով: Այն նվաճվել է մեր եղբայրների, որդիների բանկագին արյամբ ու Հայրենիքին նվիրաբերված կյանքով...Գլուխ խոնարհենք... Արցախյան պատերազմն իր հետ բերեց նաեւ ծանր ու դառնագին երեւույթ՝ անհայտ կորածներ. նրանց թիվը հաշվվում է հարյուրներով: Այս հուշակոթողը խորհրդանշական է, եւ իր գոյությամբ անհայտ կորածների հավաքատեղի է լինելու...

Գեներալը, սակայն, կոչ է անում՝ չկորցնել վերջին հույսը.

- ...Այս հուշարձանը տապանաքար կամ գերեզմանատեղի չէ: Ուզում եմ, որ ձեզանից յուրաքանչյուրն այս հուշարձանին վերաբերվի որպես ժամանակավոր բացակա իր որդուն, հորը, եղբորը, հարազատին...

Մ. Գ. Գրիգորյանը նաեւ հավատիացնում է.

-Այս հուշարձանի կառուցմամբ մեր պետությունը, ՀՀ ղեկավարությունը, Պաշտպանության նախարարը եւ այսօր ներկա կառավարական հանձնաժողովի բոլոր անդամները մի կողմից ապացուցում են, որ ձեր հարազատների խնդիրները մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են: Իսկ մյուս կողմից՝ ջանք ու եռանդ եւ միջոցներ չեն խնայվելու՝ փնտրելու, գտնելու եւ տուն վերադարձնելու նրանց: Մենք ամեն ինչ կանենք, որ մեր հայրդիները՝ կենդանի, թե մասունք, տուն վերադառնան:

Խորհրդանշական էր նաեւ Արցախ աշխարհից բերված հողը, որը, հանց նշխարը ու կարոտ՝ արարողության մասնակիցները շաղ տվին հուշարձանի շուրջ...

Եռաբլուր...Անմահների կացարանը... Առհասարակ՝ խաղաղություն է բացավորում այնտեղ, բյուր կյանքերից ու հույզերից խաղաղության, անկախության վերածված ոգին... ու լռությունը անսահման, լռությունը, որ այնտեղ այնքա՜ն խոսուն է, շատ ավելի խոսուն, քան այլուր... Քամին խաղում է ծաղիկների հետ (դրանք էլ սովորական ծաղիկներ չեն. անձնուրաց նվիրյալներն են՝ իբրեւ ծաղիկներ հառնած...) ու պատմում անկախություն, ազատություն, խաղաղություն կերտելու առասպելը:

...Պատերազմ էր, մահ, ավեր ու սարսափ... Պատերազմ՝ նույն հին արյունռուշտ յաթաղանի դեմ, նույնը, միայն անունն էր փոխված՝ ազերի... ու պատերազմի բոցարհավիրքից կոռեցին նրանք արժանավայել ապրելու փառքը, որը իրենց հարազատների համար այսօր անորոշ սպասում է դարձել: Հերթական անգամ խախտվել էր անդորրը Եռաբլուրի: Անհայտ կորածների նորաբաց հուշակոթողի շուրջ հավաքվել էին կրկին որդեկորույս ծնողներ: Բայց արցունքների միջից նաեւ երախտիքի խոսքեր էին հնչում:

Անհայտ կորածներ... Ոչ, հավերժող դյուցազուններ: Անկախության տասնամյակ ենք տոնում ու տասնամյա անկախությունն այդ գնահատականն է հենց ձեր սխրանքի...

Անհետ չի կորել գոյությունը ձեր, այլ վերափոխվել մի ավելի վեհ կեցուցյան ձեւի: Հայաստան երկրի անկախ գոյության անվտանգության դավանանքը ձեր վահանն էր այնժամ, հավատն էր կռում մահից կյանք ու հույս:

Ձեզ անհայտ կորածներ են ասում, բայց ով՝ ով, մենք, մեր սերունդը, գալիք սերունդները չենք կարող չզգալ ձեր հավերժական ներկայությունը:

Ձեզ անհայտ կորածներ են ասում, բայց հենց դուք եք ներկա մեր անկախության ու խաղաղության ամեն պահի մեջ, ձեր գոյությունն է պայմանավորել գոյությունը մեր, ու ձեր սխրանքը՝ նոր սխրանքների ճանապարհ բացել:

Ու... կորած ասածն էլ հարաբերական է շատ. ո՞վ է կորած... Դու՞ք, դու՞ք, որ հավերժ կաք. թե՞ նրանք, ովքեր իրենց ֆիզիկական, առարկայական գոյությունից դուրս՝ չեն եղել ու չկան էլ... կորած են: Ձեզ, որ անհայտ կորածներ են ասում, ձեր անունները արյունով են հավերժագրված, վիմագրված են մեր անկախություն սահմանաքարին: Այո՝, հանուն հայրենիքի, հանուն նրա անկախ, արժանապատիվ գոյության, հանուն նրա սրբագործ ու սրբակերտ մասունքների, նրա արժեքների պաշպանության անհետ չեն կորչում... չեն կարող: Ահավասիկ, հուշարձանը՝ կանգուն ու վկա՝ մշտապես հայտնի ձեր գոյության, հավիտենապես վերադարձած ձեր փառքի, հուշարձան՝ հառնող հավատի ու համոզմունքի: Անհե՞տ... Անուններ, որ երկյուղածությամբ են արտաբերում մի ողջ ազգի շուրթեր, կենսագրություններ, որ սերունդներին ուսուցանում են արվեստը, կյանքը, սխրանքներ, որ պատմվում են իբրեւ առասպելներ...եւ այդ ամենը՝ անհե՞տ:

Ո՛չ, դատապարտված... հարատեւության: